ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 27 - Ա
30 հուլիսի 2013թ.

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՓԱՄԵՐՁ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՈՂԱՓԵՐԸ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՄԲ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.17-րդ կետերի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Սևանա լճի ափամերձ տարածքների լողափերում բժշկական ծառայություն իրականացնելու համար՝

   1) <<Սևանի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Նիկողոսյանին՝ <<Ֆլամինգո>> լողափի բուժկետում նշանակել մեկ բժիշկ և մեկ բուժքույր.
   2) <<Սևանի պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Հ.Ղազարյանին՝ <<Հանրային լողափ>>-ի բուժկետում նշանակել մեկ բժիշկ և մեկ բուժքույր:
2. Լողափերի բուժկետերում նշանակված բժիշկների և բուժքույրերի վարձատրությունը կատարել սահմանված կարգով:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

Ա.ՀԱԿՈԲՅԱՆ